ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
29.04.2026թ. կնքված N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76» գնման պայմանագրի

ք. Երևան «01» 07 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Շինաշխարհ1» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Մանուկյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքությունը, 29.04.2026թ. կնքված N «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի տարածքում դիտահորերի վերակառուցման, չշահագործվող դիտահորերի փակման և նիշերի կարգավորման աշխատանքների կատարման դիմաց վճարման ենթակա գում արը սահմանել մինչև 75000000 (յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«Շինաշխարհ1» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Վ. Տերյան թղմ., 1-ին փող., 8-րդ հող, 044 291945
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1150018191801856
Հ/Հ 900012000585	ՀՎՀՀ 00913285
ՀՎՀՀ 02593108	
Վ. Պապիկյան (ստորագրություն) Կ.Տ.	Ա. Մանուկյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 01 » 07 2026թ. կնքված
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

			Աշխատանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231143/530	Երևան քաղաքի տարածքում դիտահորերի վերակառուցման, չշահագործվող դիտահորերի փակման և նիշերի կարգավորման աշխատանքներ	----------	----------	----------	----------	----------	----------	75000000	75000000	75000000	75000000	75000000	75000000	75000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012000585
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Շինաշխարհ1» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Առինջ, Վ. Տերյան թղմ., 1-ին փող., 8-րդ հող, 044 291945
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150018191801856
ՀՎՀՀ 00913285

Ա. Մանուկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

BANK AMIO

N 2483-02

«30» 06 2026

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը, (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՇԻՆԱՇԽԱՐՀ1» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 11,250,000.00 (տասնմեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան՝ 31.08.2027թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետգործառնական ծառայության ղեկավար Վ.Սարգսյան

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48

«AMIO BANK» CJSC
48 Nalbandyan Str., Yerevan, 0010, Armenia

ЗАО «АМИО БАНК»
РА, 0010, г. Ереван, Налбандян 48

+374 10 59 20 20
www.amiobank.am

BANK AMIO

N 2482-02

«30» 06 2026

ԵՐԱՇԽԻՔ
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՇԻՆԱՇԽԱՐՀ» ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 7,500,000.00 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքվելիք N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան՝ 31.08.2028թ. ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/76 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը կենթարկվեն լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետգործառնական ծառայության ղեկավար Վ.Սարգսյան